**Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքների մասին հաշվետվությունների ընթացքում արված առաջարկությունների և դիտողությունների իրականացման**

***միջոցառումների պլան***

| հ/հ | Միջոցառման բովանդակությունը | Առաջարկող ամբիոնը/անձը | Կատարման ժամկետը | Պատասխանատու ամբիոն (անձ) | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մեծացնել համագործակցությունը հանրապետության մյուս պետական բուհերի հետ ընդհանրապես, իսկ մասնագիտական ամբիոնների հետ՝ մասնավորապես | Պատմության ամբիոն, Հասարակական գտությունների ամբիոն | 2013թ. մայիս | Հարությունյան Հ., Քուրքչյան Լ. Ն., Ղաջոյան Հ. | |
| 2 | Կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝արտաքին գրախոսման իրավունք ստանալու նպատակով | Պատմության ամբիոն | մինչև 2014թ. | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Հարությունյան Հ. | |
| 3 | Ամբիոններում, հետազոտությունների ուղղվածության շրջանակներում, ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները | Հասարակական գտությունների ամբիոն, Պատմության ամբիոն, Իրավագիտության ամբիոն | մշտական | ամբիոնի վարիչներ | |
| 4 | Մանկավարժական պրակտիկան, հատկապես ավարտական կուրսերում, կազմակերպել ԳՊՀ բազային դպրոցներում | Հասարակական գիտությունների ամբիոն | 2014թ. փետրվար-մայիս | Քուրքչյան Լ. Ն. | |
| 5 | Հաճախակի կազմակերպել բանավեճեր, գիտաժողովներ տարբեր մասնագիտությունների ուսանողների մասնակցությամբ՝ թեմաները նախապես քննելով ամբիոնների համապատասխան մասնագետների հետ | Հասարակական գտությունների ամբիոն, Իրավագիտության ամբիոն | 2013-2014թ. սեպտեմբեր- մայիս | դեկանատ, ամբիոններ | |
| 6 | Կազմակերպել կլոր սեղաններ «Քյավառ» հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով հաղորդվող ոչ ճիշտ գիտական տեղեկատվությունը համապատասխանորեն իրավասու մասնագետ կադրերի միջոցով շտկելու նպատակով | Պատմության ամբիոն | ըստ անհրաժեշտության | ռեկտորատ, դեկանատ, ամբիոններ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Դասախոսների և ուսանողների ուժերը օգտագործել հանրապետական և միջազգային գիտաժողովներին առավել մեծ մասնակցություն ապահովելու համար | Հասարակական գտությունների ամբիոն, Պատմության ամբիոն, Իրավագիտության ամբիոն | 2013-2014 ուս. տարվա ընթացքում | ամբիոններ | |
| 8 | Միջանկյալ քննությունների կազմակերպումն ու անցկացումը դեռևս ունի զգալի թերություններ և առաջիկայում կատարելագործման մեծ կարիք ունի | Հասարակական գտությունների ամբիոն, Պատմության ամբիոն, Իրավագիտության ամբիոն | 2013-2014 ուս. տարվա ընթացքում | դեկանատ ամբիոններ | |
| 9 | Դասախոսների գնահատման ուսանողներին հատկացվող անանուն հարցաթերթիկներում հարցերի կատարելագործում | դեկանատ | 2013-2014 ուս. տարվա ընթացքում | Որակի ապահովման բաժին, դեկանատ | |
| 10 | Ժամանակակից մեթոդներով և ժամանակակից տեխնիկայի (պրոյեկտոր) օգտագործմամբ դասատվության առավել արդյունավետ կազմակերպումը հատկապես պատմության ամբիոնի դասախոսների կողմից | Պատմության ամբիոն, դեկանատ | 2013-2014 ուս. տարվա ընթացքում | Պատմության ամբիոն, դեկանատ | |
| 11 | Նախորդ տարիների բոլոր մասնագիտությունների շրջանավարտների հետ կապերի ամրապնդման նոր և արդյունավետ ձևերի որոնում | դեկանատ | մշտական | Հանրության հետ կապերի և լրատվության բաժին, դեկանատ | |

ՀՄՖ դեկան՝ Հ. Գ. Ղաջոյան